ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/46 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով մարզագույքի /դահուկի ձողեր/ գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 11.05.2023թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Գիլոյան
Հանձնաժողովի անդամ՝ Դավիթ Բաղումյան
Սուսաննա Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ
2	«Տեխնո Սիթի» ՍՊԸ
3	«Վահագն Կեսոյան» ԱՁ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 **«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«Տեխնո Սիթի» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտը ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չ/Հ	Գնման գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ		«Տեխնո Սիթի» ՍՊԸ		«Վահագն Կեսոյան» ԱՁ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	**892800**	883080	883080	892000	892000	16000000	19200000
2	**1008000**	-	-	1007000	1007000	16000000	19200000

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1 **«Սպորտ Ինսայթ» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.2 **«Տեխնո Սիթի» ՍՊԸ** -ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, մասնավորապես բացակայում է Հավելված 1.3-ը՝ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Բացի այդ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը հստակ չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5.2 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը շարունակել **«Տեխնո Սիթի» ՍՊԸ** -ի կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ 2023թ. մայիսի 15-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 15.05.2023թ. ժամը 11:00-ին

7. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

7.1 **«Տեխնո Սիթի» ՍՊԸ** -ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից՝

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Սպորտ Ինսայթ ՍՊԸ-ին,**
2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել **«Տեխնո Սիթի» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել **«Տեխնո Սիթի» ՍՊԸ** -ի հայտը 1-ին չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.3 Հակադարձ աճուրդի արդյունքում **«Վահագն Կեսոյան» ԱՁ**-ի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Գնահատման արդյունքների մասին

9.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Կարեն Գիլոյան /նախագահ/

_____ Դավիթ Բաղումյան

_____ Սուսաննա Ղազարյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/